

ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀԱՄԱՌՕՏ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ՆՊԱՏԱԿՆԵՐԻ

ԵՒ

Ա Մ Բ Ո Ղ Զ Գ Ո Ր Ծ Ո Ւ Ն Է Ո Ւ Թ Ե Ա Ն

ՍԿԶԲԻՑ ՄԻՆՉԵԻ 1914 թ.



902.7
4-28

Թ Ի Ֆ Լ Ի Ս.

Էլեկտրատպագրական «Էլեկտրատպ» Երևան, փողոց. № 17.

1 9 1 4

ՀԱՅՈՅ ԱԶԳԱԳՐԱԿԱՆ

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԿԱԶՄԸ 1914 թ.

I. Հովանաւորող անդամներ

- † Նորին Վեհափառութիւն ՄԿՐՏԻԶ Կաթողիկոս ամենայն Հայոց.
- † Նորին Վեհափառ. ՄԱՏԹԷՈՍ Բ. Կաթողիկոս ամենայն Հայոց.
- Նորին Վեհափառութիւն ԳԷՈՐԳ Ե. Կաթողիկոս ամենայն Հայոց.

II. Պատուաւոր անդամներ

- Ա. Կաղեմիկ Նիկողայոս Եակովլեիչ Մարր.
- Աղէքսանդր Մելիք-Ազարեան.
- Կոմսուհի Պրասկովիա Սերգեեիւա Ուվարովա:

III. Մշական անդամներ

Ա. ԹԻՖԼԻՍՈՒՄ

1. Ամիրթանեան Յովսէփ
2. Առաքելեան Գրիգոր *)
3. Աստուածատրեան Գէորգ
4. Աստուածատրեան Միքայէլ
5. Արծրունի Վահան
6. Ալիսաղեան Եղնիկ քահանայ
7. Աւան-Իւզբաւեան Գալիք-խան
8. Աֆրիկեան Խաչատուր
9. † Բարայեան Աւետիք րժ.
10. Բարխուդարեան Արշակ
11. Գառնիկեան Թադեոս
12. Գէորգեան Մամիկոն
13. Գէորգեան Նունէ
14. Դոյուխանեան Նունէ
15. Զարգարեան Սրիստակ. րժ.
16. Զարգարեան Աւետիս
17. Զարգիզեան Զաքար քահ.
18. Զաւրեան Իգարէլ
19. Թալիբեան Հովսէփի մայր.
20. Իշխ. Թումանեան Մարիամ
21. Թումանեան Յովհաննէս
22. Թոնեան Արտաշէս
23. Իւզբաւեան Մովսէս
24. Իփալեան Գասպար
25. Լազարեան Մարիամ

26. Լալայեան Երուանդ
27. Լալայեան Հայկանոյշ
28. Խարազեան Սարգիս
29. Խաչատրեան Թ.
30. Խունուց Գալիանէ
31. Խունուց Մնացական
32. Ծատուրեան Եփրեմ
33. † Կարա-Մուրզա Յովսէփ
34. Կարապետեան Յովհաննէս
35. Կոչեալեան Միքայէլ
36. Հայրապետեան Արիստղ. րժ.
37. Մարտիրոսեան Հայկանոյշ
38. Մարտիրոսեան Ռոստոմ
39. Մարտիրոսեան Ռուբեն
40. Մարտիրոսեան Լեւոն
41. Մամուլեան Զաքարիա
42. Մանուէլեան Ստեփան
43. Մելիքեան Համբարձում
44. Մելիք-Ազարեան Աղեքսանդր
45. Մելիք-Ազարեան Արփեմիկ
46. Մելիք-Կարապետեան Արշակ
47. Մելիք-Կարապետեան Գէորգ
48. Մէհարեան Արամ
49. Մեմիկեան Գրիգոր
50. Յակոբեան Պետրոս
51. Յակոբեան Մկրտիչ
52. Յարութեանեան Սամսոն

*) Ընդգծածները վճարել են հարկւրական րուբլի միւսները յիսունական:

Հայաստանի Հանրապետության
Միջոցառումներ
10.11.1924.
Կոնստանդնուպոլիս

300

ՀԱՄԱՌՕՏ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՅՈՅ ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
1450-ՀԱ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԵՒ ԱՄԲՈՂՋ ԳՈՐԾՈՒՆԵՌՈՒԹԵԱՆ

Սկզբից մինչև 1914 թուականը.

Հայրենիքի և ազգի ուսումնասիրութեան, ազգային ինքնութեան պահպանման, ազգային ոգին բնորոշող ազգագրական նիւթերը և հայրենի հնութիւնները հաւաքելու, պահպանելու և ուսումնասիրելու կարիքը ցայտուն կերպով երևան է գալիս՝ երբ ազգը հասնում է ինքնանախաշովեան զաղափարին, երբ նրա մէջ հասնում է ինքնուրոյնութեան, ազգայնութեան զաղափարը, և ահա այս գործոնի ազդեցութեամբ յառաջ եկաւ Ազգագրական Հանդէսը, որ սկսուեց հրատարակուել 1896 թուին, տարեկան երկու մեծ գրքով, երուանգ Լալայեանի նախաձեռնութեամբ: 1901 թուին կազմուեց մի Ազգագրական-Հրատարակչական ընկերակցութիւն, այդ հանդիսի հրատարակութիւնն ու խմբագրութիւնը կանոնաւոր կերպով լաւաջ տանելու, որին մեծապէս նպաստեց տ. Ե. Սարգսեան՝ Բագուում մշտական անդամներ գտնելով: Հինգ տարի գործելուց յետո՛ւ դա վերափոխուեց Հայոց Ազգագրական Ընկերութեան, որի կանոնադրութիւնը հաստատեց Ն. Պ. Կովկասի Փոխարքայ Վարանցով-Դաշկովը 1906 թ. մայիսի 16-ին:

Այս Ընկերութեան նպատակը որոշուած է այսպէս. ուսումնասիրել Կովկասը, նրան կից երկրները եւ հայկական գաղութները մասնաւորապէս ազգագրական եւ ընդհանրապէս մարդաբանական գիտութիւնների տեսակէտից: Միեւնոյն ժամանակ տարածել հայ հասարակութեան մէջ մարդաբանական գիտութիւնները: Նաեւ հոգալ եւ միջնորդել տեղական իշխանութիւնների առաջ պահպանելու Կովկասի հնութիւնները, կատարել պեղումներ, քանալ թանգարան, գրադարան, կազմակերպել դասաստութիւններ, քաջ անել մարդաբանական գիտութիւններին վերաբերեալ դասընթացներ, նշանակել մրցանակներ արեւելագիտութեան վերաբերեալ ամենալաւ ուսումնասիրութիւնների համար եւ այլն:

Այսպէս ուրեմն՝ թէպէտ Ընկերութիւնը կոչուած է Ազգա-
գրական, սակայն նրա նպատակի մէջ մտնում են ազգագրու-
թեան յարակից բոլոր գիտութիւնները, ինչպէս պատմութիւնը,
հնագիտութիւնը, աշխարհագրութիւնը, սօցիոլոգիան, լեզուաբա-
նութիւնը, ճարտարապետութիւնը, մարդաբանութիւնը, մի խօս-
քով մարդաբանական բոլոր գիտութիւնները (антропологические
науки, les sciences anthropologiques).

Ընկերութիւնը կազմում են ընկերութեան նպատակներին
մտաւորապէս և նիւթապէս նպաստող՝ աշխատակից և գործադիր
երկու սեռի անդամներ, որոնցից այս ընկերութեանը և կամ ընդ-
հանրապէս մարդաբանական գիտութիւններին մի առանձին ծա-
ռայութիւն ցոյց տուողները ընտրւում են պատուոյ անդամ, իսկ
միանուագ յիսուն և կամ հարիւր բուրի վճարողը՝ մշտական
անդամ:

Ընկերութիւնը կառավարւում է երկու մարմնով, Խորհուրդ,
որ հոգում է ընկերութեան տնտեսական մասը, և Խմբագրական
Մասնաժողով, որ վարում է ուսումնական մասը:

Ընկերութիւնը արժանացել է Վեհափառ կաթողիկոսներ՝
Մկրտիչ Ա., Մատթէոս Բ. և Գէորգ Ե. բարձրագոյն հովանաւո-
րութեան, ստանալով նրանցից օրհնութեան կոնդակներ:

Ընտրել է Ընկերութեան պատուոյ անդամ ակադեմիկոս Ն.
Մառնի, Մոսկուայի Կայս. Հնագիտական Ընկերութեան նախա-
գահունի կոմսունի Պ. Ս. Ուվարովային՝ սրանց Կովկասի ուսումնա-
սիրութեան մատուցած ծառայութեան և Ա. Մելիք-Աղաբեանին՝
Ընկերութեան խորհրդի նախագահի պաշտօնը հիմնարկութեան
օրից մինչև այժմ վարելու պատճառով:

Ազգագրական ընկերութիւնը մինչև այժմ ունեցել է հե-
տեկալ գործունէութիւնը:

I. Հրատարակել է Ազգագրական Հանդէսը, Մարդաբանական
գրադարանի շարքը, Հայ աշուղներ, Նիւթեր Հայ Մելիքութեան
մասին, Մարգարիտներ Հայ բանահիւսութեան և պատրաստել է
տպագրութեան համար Հայկական արձանագրութիւններ, Հայ
ձեռագիրների ցուցակներ:

II. Կատարել է պեղումներ:

III. Բաց է արել Ազգագրական-Հնագիտական Թանգարան:

IV. Կազմել է Հնագիտական Յանձնաժողով հնութիւնների
վրայ հսկելու:

V. Հիմնել է Կովկասագիտական—Մարդաբանական գրադա-
րան:

VI. Կազմել է Հայկական հրատարակութիւնների ցուցա-
հանդէս:

VII. Կազմակերպել է դասախօսութիւններ:

VIII. Կազմակերպել է գիտական արշաւանքներ:

IX. Ծրագրել է բաց անելու Մարդաբանական դասընթաց-
ներ:

X. Հիմնել է ընկերութեան ձիւղեր:

XI. Կառուցանում է Թանգարան-Գրադարանի շէնք:

I. ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

Ազգագրական Հանդէսի նպատակն է հաւաքել հայ ազգա-
գրութեան վերաբերեալ նիւթեր և սրանց ուսումնասիրութեամբ
գծել հայ ազգի հոգեկան, մտաւոր և հասարակական կեանքի դար-
գացումը: Ազգագրական Հանդէսի ցանկութիւնն է նպաստել ա-
մեն մի հայի ճանաչելու իր ազգի անցեալը, իւր երկիրը, իրեն
շրջապատող ազգերը:

Ազգագրական Հանդէսի ծրագիրն է.

1. Տեղագրութիւն. 2. Պատմական տեսութիւն: 3. Մարդա-
բանական հետազոտութիւններ. 4. Վիճակագրական տեղեկու-
թիւններ. 5. Հնագիտական հետազոտութիւններ. 6. Ազգագրա-
կան, ցեղագրական և հասարակագիտական հետազոտութիւններ.
7. Տնայնագործութեան, պարապմունքի և զիւղայինների տնտե-
սական գրութեան մասին ուսումնասիրութիւններ. 8. Ժողովրդա-
կան հաւատք. 9. Սովորութեան իրաւունք. 10. Բանաւոր գրա-
կանութիւն. 11. Ժողովրդական երաժշտութիւն. 12. Մատենա-
խօսութիւն և 13. Յայտարարութիւններ:

Ազգագրական Հանդէսը սկզբում եղել է կիսամեայ, իսկ 1907
թուից եռամսեայ, սակայն նիւթական միջոցների սղութեան
պատճառով տարեկան հրատարակուել է երկու գիրք, իսկ մինչև
1914 թ. 25 գիրք:

Ազգագրական Հանդէսը վերոյիշեալ ծրագրով մանրամասն
նիւթեր է տուել հետեւեալ գաւառների վերաբերմամբ. Ախալքա-
լաքի (Ձաւախք), Շուշու (Վարանդա), Զանգեզուրի, Գանձակի,
Բորչալուի, Հին-Նախիջևանի, Նոր-Բայազետի, Նոր-Նախիջևանի,
Բուլանըխի, ինչպէս և Սև-Մովի ափերի Համշենցիների և Վանայ
ամբողջ վիլայէթի մասին:

Ազգագրական Հանդէսի հիմնական յօդուածները և աշխա-
տակիցները հետեւեալներն են.

Աբեղեան Մ. Հայ Ժողովրդական վէպը: ԺԳ—ԺԸ գրքեր:

Աբեղեան Ա. Թլուսա Դաւիթ Զ, Է—Ը. Սասնայ ծոեր Թ. Գ.

Անարոնեան Ա. Սուրմայուրի ժողովրդական երգեր Բ. գիրք.
Անառեան Ա. և Հ. Հաւաքածոյ Պօլսահայ բամկական անգիր
գրականութեան Թ. Գիրք:

Առաքելեան Հ. Գորգերը իրանց տանը Դ. գիրք.
Աբալյիկ. Ղափանի աւանդութիւններէից ԺԹ. գիրք.
Ասուածատեան Գ. Սայադ-Նովայի անյայտ երգերից Ժ. գ.
Ասրպետ. Տրդատ Մեծի գրաւները ԻԱ. Հայ թագաւորներ
գրաւները ԻԲ. ԻԳ. և ԻԴ. Եղան պաշտամունքը ԻԴ. Շիրակի
աշկատարեան (ցիլլուպեան) ամրոցներ ԻԵ. գրքեր:

Բաբայեան Լ. Մաննիացոց տէրութիւնը ըստ Վ. Բելքի Ա.
Խոջալուրի գերեզմանները Ա. Կովկասի տեղը քաղաքակրթութեան
պատմութեան մէջ Ռ. Վիրխովի, Ա. «Խալդէր» անունը Լեմանի
Բ. Համմուրաբէի օրէնսգիրքը. ԺԵ. Պարսկաստանի կրակապաշտ-
ները ԺԸ. գրքեր:

Բերբերեան Մ. Характеристики и воспоминания кн. Г. М.
Туманова ԻԵ. գիրք:

Դադեան Ս. Վարանդայի բանաւոր գրականութիւնից ԺԸ.
ԺԹ. գրքեր:

Դիրք Ա. Ծրագիր սեպականութեան նշանների մասին նիւ-
թեր հաւաքելու է.—Ը. գրքեր:

Եգեկեան Ա. Ազգագրութիւնը և Պերճ Պոռեան ԺԶ. Սվաս-
տիկա ԺԷ. Հայկունի ԺԸ. գրքեր:

Եղնկեան Գ. ք. Կայան բերդ և Կայինոյ ձոր. Գ. Լօռուայ
հարսանիք Գ. գիրք:

Զելինսկի Ս. Բոյսերի գործածութիւնը Երևանի հասանդում
Դ գիրք:

Թառայեան Ս. Ժողովրդի արհեստագործութիւնը Գ. Օգիւստ
Կոնտ Դ. գրքեր:

Թորամանեան Ժ. Էջմիածնի տաճարը ճարտարապետական
և հնագիտական հետազոտութիւն ԺԹ. Գաւիթ կամ Ժամատուն
ԻԱ. Անի քաղաք թէ ամրոց ԻԲ և ԻԳ. գրքեր:

Իսահակեան Մ. Շիրակի ժողովրդական երգեր Դ. և Ե. գր.
Իսահակեան Ա. Փշրանքներ ժողովրդական բանահիւսութիւ-
նից ԺԲ. գիրք:

Իփակեան Դ. Քաւոր ԻԴ գիրք:
Լալայեան Ե. Զաւաթը կամ Ախալքալաքի գաւառ Ա. և Բ.
Վարանդա Բ, Սիսիան Գ. Զանգեզուր Գ. Կապան կամ Ղափան
ԺԲ. Գանձակի գաւառ Ե, Զ, Է—Ը. Բորչալուրի գաւառ Է—Ը, Թ, Ժ,
ԺԱ. Դողթան գաւառ ԺԱ և ԺԲ. Նախիջևանի ոստիկանական
շրջան ԺԱ, ԺԳ և ԺԴ. Վայոց-ձոր ԺԲ, ԺԳ. և ԺԴ. Նոր-Բայազէ-

տի գաւառ ԺԳ. ԺԴ. ԺԵ. ԺԶ. ԺԷ. ԺԸ. ԺԹ. Ի. ԻԲ. ԻԳ. ԻԴ.
Արա Գեղեցիկ Թ. Աղէքսանդր Մակեդանոս Ժ, Դաւիթ Անյաղթ
Ժ, Ռոստամ-զալ ԺԴ. Խոսրով թագաւոր ԺԴ. Դաղմուրադ-շահ
ԺԴ. Ապարանի բանահիւսութիւնից ԺԹ. Զաւաթը բանահիւսու-
թիւնից ԺԹ. Վասպուրականի ազգագրութիւնը Ի. Վասպուրա-
կանի ասորիները ԻԴ. Վասպուրականի նշանաւոր վանքերը Ի.
ԻԱ. ԻԲ. Վասպուրականի բանահիւսութիւնը Ի. ԻԱ. ԻԲ. ԻԳ.
ԻԴ. ԻԵ. Վասպուրականի հաւատքը ԻԵ. Տնայնագործութիւնը
Վասպուրականում ԻԵ. գրքեր. Ծխական կարգերը Հայոց մէջ ԻԱ.
ԻԳ. ԻԵ. Հայոց Ազգագրական ընկերութիւնը և նրա կանոնա-
գրութիւնը ԺԴ. Քարտէզներ՝ Գանձակի, Բորչալուրի, Շարուր-
Դարալագիզի, Հին-Նախիջևանի և Նոր-Բայազէտի:

Լեւոնեան Գ. Հայ աշուղներ Ժ. ԺԱ. ԺԲ. ԺԳ.

Լիսիցեան Ս. Նկարագրութիւն հոգևորական վարույց Յովսափ-
փու, որդւոյ թագաւորին Հնդկաց աշխ. Մեսրոպ Վարդապետ Տէր
Մովսիսեան. (գրախօսութիւն) Գ. Сношения Петра Великаго съ
армянскимъ народомъ Г. А. Эзова С. П. Б. 1898. (գրախօսու-
թիւն) Դ.

Խալաբեան Բ. Հայ ազգագրութիւնը ԺԴ.

Խոսիկեան Շողակաթ:

Կարա-Մուրզա. Տնայնագործների ժողովը. Է—Ը. Ծրագիր
տնայնագործութեան ԺԲ. գրքեր:

Կոստանեան Կ. Պրոյգ և տուայր ԺԳ. Դաւիթ վարդապետ
Ալաւկայ որդի ԺԴ. ԺԵ.

Կրպե. Խճկօնք Ա.

Համալեւեան Ե. Բանանց գիւղի գերեզմանները Բ.

Ղլսչեան Ա. Հայ հին իրաւունքը ԻԲ. ԻԳ. ԻԴ. գրքեր.

Մալխասեան Աս. Տէրսիմ, գրախօսութիւն Է.—Ը. Արսէն
արք-Եպիսկոպոս Այոթնեան Թ. գ.

Մալխասեան Յ. Հայ գեղջուկի ալբոմը Գ. և Զ. գրքեր.

Մախուսեան Մ. վ. Ամատունու «Բառ և բան» ԻԴ.

Մելիքեան-Բեկեան. Վրաց Պատմա-Ազգագրական ընկ. հրա-
տարակութիւնները ԻԵ. գ.

Մ. Մ. Ազգագրական նիւթեր Փաւստոս Բիւզանդացւոյ
Հայոց պատմութեան մէջ ԻԵ.

Մուրադեան Յակոբ Համշէնցի հայեր Դ. Ե. գրքեր.

Յարութլեւեան Ի. Սանահին Դ. Գօշայ վանք Ժ. Գ. Եգեանի
յիւնամիակի առիթով ԺԲ.

Յով. Սար. Դուրա, պարսկական վիճակախաղ ԺԶ. գ.

Յովսէփեան Գ. Վ. Ռոստամ Զալ է.—Ը. ԺԲ. Կաթողիկոսական յուզարկաւորութիւն ժԶ. Կաթողիկոսական ընտրութիւնը և օծումը ժԹ. Atlas zum katalog der armenischen Handschriften V. Fink u Strgowski. Tubingen 1907.

Նժդեմեան Գ. Բ. Ալաշկերտի բանաւոր գրականութիւնը Թ. ժԹ. Ի. Քրդական ժողովրդական վէպ. ժԱ.

Նաւասարդեան Բ. Ա. Երիցեանի մահուան առթիւ. է.—Ը.

Շահագիզ Ե. Նոր-Նախիջևանը և Նոր-Նախիջևանցիք է.—Ը. Թ. գրքեր.

Շահնագարեան Ա. Գր. Խալաթեան ԻԲ. Գ. Եպ. Սրուանձտեան ԻԴ. ԻԵ. գրքեր.

Շեքեմց. Գարեգին Էպիսկոպոս Սրուանձտեան. մահուան տասնամեակի առթիւ Թ. Գ.

Չարուղ. Բասէն.

Սամուէլեան Խ. Արեան վրէժ և փրկանք. ժ. Հին Հայոց իրաւունքը և նրա հետազօտելու մեթոդը. ժԱ. Առեանգամբ և գնմամբ ամուսնութիւն. ժԲ. Հայ ընտանեկան պաշտամունքը ժԲ. ժԳ. ժԴ. Հայոց ժառանգական իրաւունքը. ժԵ. ժԶ. Մայրական իրաւունք ժԷ. ժԸ. ժԹ. Ֆոկլորի Միջազգային դաշնակցութիւնը ԻԱ. Սիմփսը Հայ սովորոյթներում ԻԲ. ԻԳ. գրքեր.

Սարուխան Ա. Journal Asiatique ժԹ.

Տեւ-Մովսիսեան Մեսրոպ Էպիսկոպոս. Նախապաշարմունքներ Եղիշէի կանոններում. Բ. Յուդակ ձեռագրաց Վիեննայի Միթիթարեան միաբանութեան (գրախօսութիւն) Բ. Սեպաձե արձանագրութիւններ Անդրկովկասում, Նիկոլսկու (գրախօսութիւն) Բ. Էջմիածին և Հայոց հնագոյն եկեղեցիներ ժԵ—ժԶ. Հայկական մանրանկարներ Ի.—ԻԴ. Հայկական արձանագրութիւններ ԻԵ. գրքեր.

Տեւ Աւետիսեան Ս. Կոստանեանի Հայագիտութիւնը Արեւմտեան Եւրոպայում. Ի. Կոմսուհի Պ. Ս. Ուվարովա ԻԱ. գրքեր.

Փափագեան Վ. Հայկական երաժշտութեան մասին Դ. Հայ բօշաներ Դ. գրքեր.

Քալանթար Ա. Կաթնային արդիւնքներ. Դ. Գ.

Քաջբեհունի. Հայկական սովորութիւններ է.—Ը. Թ. գրքեր.

Ք. Օհանեան. Կրակը Ա.

Փոբեհեան. Նոր Նախիջևանի բանահիւսութիւնից Ի. Գ.

Ծրագիր Հայոց Ազգագրական թանգարանի համար նիւթեր հաւաքելու ժԶ Գ.

Հանդիսի բոլոր գրքերը պատկերազարդ են:

ՄԱՐԴԱՌԱՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

Հայոց Ազգագրական Ընկերութիւնը նպատակ ունենալով տարածել մարդաբանական գիտութիւնները հայ հասարակութեան մէջ՝ սկսել է «Մարդաբանական գրադարան» խորագրով մի շարք հրատարակութիւն, որից մինչև այժմ լոյս են տեսել հետևեալ չորս պրակը.

1) ԼԵՏՈՒՐՈ. Ամուսնութեան զարգացումն, թարգմ. Ե. Լ.

2) ԿԱՆԵՍՏՐԻՆԻ Մարդաբանութիւն. թարգմ. Ե. Լ.

3) ՊՈՊՈՒԱ. Նորագոյն տեսութիւններ գերդաստանի, հասարակութեան և պետութեան ծագման մասին. թարգմ. Ե. Լ.

4) ՌԱՏԵԼԻ. Տարերք ազգագրութեան. թարգմ. Ի. Յարութիւնեանի:

ՀԱՅ ԱՇՈՒՂՆԵՐ

Մի այլ սերիա նուիրուած հայ աշուղներին և նրանց երգերին ընկերութիւնը ձեռնարկել է՝ հրատարակելով Գէորգ Հախվերդեանի «Հայ աշուղներ» ստուար ժողովածուն, նրա դստեր՝ Մանէ Հախվերդեանի ծախքով, Սայաթ-Նովայի անտիպ երգերը և մի ընդարձակ ուսումնասիրութիւն հայ աշուղների մասին նշանաւոր աշուղ Զիւանու աջակցութեամբ, նրա որդու՝ Գ. Լեոնեանի աշխատասիրութեամբ:

ՄԱՐԳԱՐԻՏԵՆԵՐ ՀԱՅ ԲԱՆԱՀԻՒՍՈՒԹԵԱՆ

Առանձին ուղագրութիւն դարձնելով հայ բանահիւսութեան վրայ, ընկերութիւնը չբաւականացաւ այն ծաւալով, որ յատկացւում է Ազգագրական Հանդէսի էջերից և հիմնեց մի առանձին շար՝ Մարգարիտներ Հայ բանահիւսութեան խորագրով, որի առաջին պրակը՝ Ե. Լալայեանի Էջմիածնի գաւառի հեքիաթները արդէն լոյս տեսաւ, երկրորդ գիրքն էլ տպագրւում է: Այս շարքի հրատարակութեան ծախքը յանձն է առել տ. Հայկանոյշ Մարտիրոսեան, ձօնելով հրատարակութիւնը իւր դստեր՝ վաղա մեռիկ Մարգարիտի յիշատակին:

ՆԻՒԹԵՐ ՀԱՅ ՄԵԼԻՔՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Առանձին ուղագրութիւն դարձնելով հայ մեղիքութեան պատմութեան վրայ՝ ընկերութիւնը սկսել է մի շարք հրատարակու-

թիւները և արդէն լոյս է ածել Առաքել վարդապետի Դիզակի մելիքութիւնը: Տպագրուած է Կարապետ հպիսկոպոս Տէր Մկրտչեանի կազմած Դոփեանց տան և Գեղարքունիքի Մելիք-Շահնազարեանների պատմութիւնը: Այս շարքի հրատարակութեան ծախքը յանձն է տուել պ. Աստուածատուր Վաչեանը: Ընկերութիւնը միաժամանակ կոչ է արել մելիքների ժառանգներին ուղարկել իրեն ընկերութեան գրադարան-թանգարանում անկողուստ պահելու մելիքներից ֆնացած վաւերաթղթեր, նամակներ, ֆիրմաններ, կոնդակներ և ամեն տեսակ իրեր: Եւ արդէն իսկ բաւականաչափ վաւերաթղթեր և իրեր ստացել է:

ՀԱՅԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՊԱՏՄԱԳԻՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Ազգագրական Հանդիսի մէջ գետեղուած են նաև բազմաթիւ հնագիտական և պատմական յօդուածներ. ընկերութիւնը այսպէս է վարուել, որովհետև իւր կանոնադրութեամբ նա պարտաւոր է հրատարակել նաև հնագիտական և պատմագիտական յօդուածներ, սակայն միջոցներ չունենալու պատճառով նա առանձին հրատարակութիւն չէ հիմնել, այլ գետեղել է Ազգագրական Հանդիսում: Ընկերութիւնն այժմ ամեն ջանք գործ է դնում, որ կարողանայ միջոցներ գտնել հիմնելու երկու առանձին հրատարակութիւն և՛ հնագիտական և պատմագիտական:

ՀԱՅԵՐԷՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ի նկատի առնելով այն մեծ նշանակութիւնը, որ արձանագրութիւններն ունին թէ՛ պատմական, թէ՛ լեզուաբանական և թէ՛ սօցիալօգիական տեսակէտներից, Ընկերութիւնը չը բաւականալով այն բազմաթիւ հատուածներով և ամբողջական յօդուածներով, ինչպէս օր. Մեսրոպ հպիսկոպոս Տէր-Մովսիսեանին է (Հայկական արձանագրութիւններ), որ տըպուած են Ազգագրական Հանդէսների մէջ, հիմք է դրել հայկական արձանագրութիւնների մի առանձին ժողովածուի (Corpus inscriptionum armenicarum), ամեն ջանք գործ դնելով լուսանկարելու և կամ էստամպածով հանելու արձանագրութիւնները և արդէն Ե. Լալայեանի աշխատութեամբ պատրաստ է մի ստուար հատոր՝ բազմաթիւ լուսանկարներով, որ կը հրատարակուի, երբ միջոցներ լինեն:

ՁԵՌԱԳՐՆԵՐԻ ՀԱՒԱԲՈՒՄՆ ԵՒ ՅՈՒՑԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ

Ընկերութիւնը ամեն կերպ աշխատում է հաւաքել իւր մատենագրանում հայերէն ձեռագիրներ, մինչև այժմ բաւականաչափ նուէր է ստացել օր. Մանէ Հախվերդեանից, տ. Մարիամ Լազարեանից, պ. Պետրոս Հայկազունուց, արժ. Մեսրոպ ա. ք. Մելեանից, պ. Աւետիք Տէր-Յակոբեանից, պ. Ե. Թադէոսեանից և ուրիշներից: Դժբախտաբար Ընկերութիւնը միջոցներ չունի, սպա թէ ոչ կարող է գիտական արշաւանքներ կազմելիս չափազանց ձեռնտու պայմաններով բազմաթիւ ձեռագիրներ գնել մասնաւոր անհատներից:

Ընկերութեան նախաձեռնութեամբ Ե. Լալայեանը կազմել է Վասպուրականի հայերէն 2000 ձեռագրների մանրամասն ցուցակը, որի յիշատակարանների մէջ կան բազմաթիւ պատմական և բանասիրական նիւթեր: Այս ստուար աշխատութեան տպագրութիւնը յամր է կատարուում, դարձեալ նիւթական միջոցների սղութեան պատճառով:

II ՊԵՂՈՒՄՆԵՐ ԵՒ ԱԶԳԱԳՐԱԿԱՆ-ՀԱՅԳԻՏԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ

Ընկերութիւնը ի նկատի առնելով այն ահագին նշանակութիւնը, որ ազգագրական-հնագիտական թանգարանը ունի թէ՛ մի ազգի ինքնուրոյն դարգացումը և թէ՛ ընդհանրապէս մարդկային էվոլյուցիան բնորոշելու համար. ի նկատ առնելով, որ համաշխարհային քաղաքակրթութեան շնորհիւ հայի առանձնայատուկ կեանքը, նրա ազգային զգեստները, պարտպմունքի գործիքները, նիստ ու կացը, սովորութիւնները մեծ արագութեամբ փոփոխութեան են ենթարկւում. ի նկատ առնելով որ մշակուող հողի սակաւութեան պատճառով դարերից ի վեր անեղծ ֆնացած դամբարանները այժմ հերկւում են, և այս պատճառով նրանք կամ կորցնում են այն նշանները, որոնցով հնագէտները հնարաւորութիւն ունին նրանց որոշելու և պեղելու, հետեւապէս և մընալու են գետնի տակ անյայտ կամ երբ բացւում են, նրանց մէջ եղած հնագիտական իրերն ընկնելով գիւղացիների ձեռքը՝ ոչնչացւում են և կորցնում իրենց գիտական արժէքը՝ բացեց Ազգագրական-Հնագիտական թանգարան, առանձին ուղղորդութիւն դարձնելով պեղումների վրայ: Ե. Լալայեան Ընկերութեան աջակցութեամբ պեղումներ կատարեց Նոր-Բայազէտի և էջմիածնի գաւառներում, և գտաւ թէ՛ քարի, թէ՛ բրոնզի և թէ՛ երկաթի գարերին վերաբերեալ բազմաթիւ իրեր: էջմիածնի գաւառում գտ-

նուած քարէ դարի իրերը գիտական տեսակէտից չափազանց մեծ նշանակութիւն ունին, որովհետեւ մինչև այժմ Կովկասում չէին գտնուել քարի դարի իրեր, և հնագէտները կարծում էին, թէ այս, քարի դարում Կովկասում բնակչութիւն չէ եղել, մինչդեռ այս պեղումները գալիս են հակառակը հաստատելու: Բրոնզէ դարի իրերից նշանաւոր է փայտէ սայլը՝ լծուած չորս եղներով, որի վրայ գտնուում էր մի իշխանի կմախք իւր զիաղէմով, զէնքերով, զարդերով, և գայիսոնով, շուրջը 13 կմախք զանազան ուղղութեամբ թափուած: Այս սայլը հիացում պատճառեց Գուգի անդամ հնագէտ Պաւել Միլիկովին, որ իւր Թիֆլիսում կարգացած դասախօսութեան մէջ յիշատակեց և Ընկերութեան այցելուների մատենանում արձանագրեց. «Съ глубочайшимъ интересомъ ознакомился съ поучительными раскопками Е. А. Лалаяна изъ чистѣйшей галыштадской эпохи и съ интересными альбомами снимковъ изъ Турецкой Арменіи».

Շնորհիւ այն հանգամանքի, որ Մոսկուայի Կայսերական Հնագիտական ընկերութեան նախագահուհի կոմսուհի Պ. Ս. Ուվարովան սիրալիր կերպով ընդունել է մեր ընկերութեան պատուաւոր անդամի կոչումը, Ընկերութիւնը ամենայն հեշտութեամբ արտօնութիւն է ստանում պեղումներ կատարելու այն պայմանով, որ գտնուած իրերը պահուին իւր թանգարանում, իսկ նրանց նկարագրութիւնը, բացի Ազգագրական Հանդիսի մէջ տպագրուելուց, հրատարակուին նաև ուսերէն լեզուով վերոյիշեալ ընկերութեան «Материалы по археологии Кавказа» հրատարակութեան մէջ: Այսպէս արդէն տպւում են Ե. Լալայանի Նոր-Բայազէտի և Շարուր-Դարալագեազի գաւառներում կատարած պեղումների և հնութիւնների նկարագրութիւնները:

Թանգարանի Ազգագրական մասում առանձին ուշադրութիւն է դարձուած հայկական հանդերձների և զարդերի վրայ և մանիկէներով ցուցադրուած են Ախալցխացու (նուիրել են Տ. Յովհաննիսեան և պ. Կ. Մարութեան) Նուխեցու (նուիրել է Տ. Սիւրիկեան) Թիֆլիսեցու (նուիրել է Տ. Բայնդուրեան), Շուշեցու, Շամախեցու (նուիրել է Տ. Շ. Յովհաննիսեան) Նուխեցու (նուիրել է Նունէ Սարուխանեան), Շատախեցի և Վանեցի կանանց (նուիրել է Տ. Հ. Մարտիրոսեան) և տղամարդու (նուիրել է պ. Աղէքսանդր Մելիք Ազարեան), Ղարադաղցի տղամարդկանց և կանանց (ձեռք է բերուած պ. Ս. Տէր-Յակոբեանի նախաձեռնութեամբ), Ագուլեցի կնոջ ամբողջ հանդերձներն ու զարդերը: Կան նաև տնայնագործութեան վերաբերեալ բաւականաչափ մոդելներ, լուսանկարներ և մանրամասն նկարագրութիւն:

Բժ. Ա. Զարգարեանի նախաձեռնութեամբ զոկերը մի առանձին մասնաժողով են կազմել յատկապէս Գողթան գաւառի ազգագրական և հնագիտական իրերը հաւաքելու և յանձնելու մեր թանգարանին ի սեփականութիւն, այն պայմանով, որ այդ բոլորը մեր թանգարանում մի առանձին բաժանմունք կազմեն Գողթան մականգրութեամբ:

Աղէքսանդրապոլցի Կորանեան եղբայրները խոստացել են նուիրել մեր թանգարանին իրենց հաւաքած հնագիտական իրերը, որ 10,000 ռ. աւելի արժեն, միայն այն ժամանակ, երբ Ընկերութիւնը կունենայ թանգարանական յատուկ, սեպհական շէնք:

ՀԱՍԳԻՏԱԿԱՆ ՄԱՍՆԱԺՈՂՈՎ

Ընկերութեան կանոնադրութեան § 2. Ե. հիմամբ կազմուած է առանձին Հնագիտական Մասնաժողով Կովկասի Հայոց հնութիւնների վրայ հսկելու և նրանց պահպանութեան նպատակով վերանորոգումներ կատարելու: Մասնաժողովը բաղկացած է 7 անդամից, որոնք ընտրուում են ընկերութեան խորհրդի և խմբագրական մասնաժողովի միացեալ ժողովում հայկական ճարտարապետութեան քաջ ծանօթ ճարտարապետներից, հնագէտներից, և նկարիչներից: Հնագիտական Մասնաժողովի գործունէութեան համար հիմք է դրուած հնագիտական յատուկ ֆոնտի:

III. ԿՈՎԿԱՍԱՍԳԻՏԱԿԱՆ-ՄԱՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ.

Ընկերութիւնը ի նկատի առնելով ընդհանրապէս մարդաբանական գիտութիւններին և մասնաւորապէս կովկասագիտութեան վերաբերեալ գրքերի անհրաժեշտութիւնը Կովկասի ուսումնասիրութեամբ պարապողների համար՝ բաց արեց Թիֆլիսում Կովկասագիտական-Մարդաբանական գրադարան, ինչն սկզբից նուէր ստանալով Ե. Լալայանից այդ գիտութիւններին վերաբերեալ հարուստ գրադարանը (1300 կտոր գիրք մօտ 5000 ըուրլի արժողութեամբ): Այնուհետև նուէր ստացուեցան Արզար Յովհաննիսեանի, պրոֆ. Գրիգոր Խալաթեանի, Միսաք Արամեանի, Սմբատ Լազարեանի, Վահան Գաբրիելեանի, Աւետիք Արասխանեանի, Գէորգ Հախվերդեանի, Գրիգոր Յարութիւնեանի, Գէորգ Արովեանի գրադարանները, որոնցից իւրաքանչիւրը դարձուած է առանձին պահարաններում, որոնց վրայ դրուած են նուիրատուների պատկերները: Այժմ գրադարանը ունի 6900 կտոր գիրք, և ստանում է 54 պարբերական հրատարակութիւններ, փոխանա-

կելով Ազգազրական Հանդէսի հետ: Գրադարանը գիտութեամբ պարապողների համար բաց է առաւօտուայ ժամը 8½-ից մինչև գիշերուայ ժամը 12-ը:

Գրադարանում մի առանձին պահարան յատկացրուած է հայ մեղիքներին վերաբերեալ վաւերաթղթերի, կոնդակների և հայ գրողների ու հասարակական գործիչների նամակների համար:

Բացի սրանից Հայ գրամատուրգ Գաբրիէլ Սունդուկեանի ժառանգները խոստացել են նուիրել նրա ամբողջ գրադարանը և հնագիտական ու ազգազրական իրերը երբ պատրաստ կլինի ընկերութեան գրադարան-թանգարանի սեպհական շէնքը:

ՀԱՅԿԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՅՈՒՅԱՀԱՆԴԵՍ.

Ի յիշատակ հայկական գրերի 1500 ամեակի և հայ տպագրութեան 400 ամեակի ընկերութիւնը 1913 թ. հոկտեմբերի 13-ից մինչև 1914 թ. հոկտ. 12 կազմակերպում է Հայկական Հրատարակութիւնների ցուցահանդէս բաժին առ բաժին: Հոկտ. 12—30 բացուեց ռուսաւայ մամուլի բաժինը, որի առթիւ տեղի ունեցան դասախօսութիւններ, կազմուեց և տպագրուում է ռուսահայ մամուլի բոլոր նշանաւոր յօդուածների գրախօսութիւնը և ռուսահայ բոլոր խմբագրների խմբանկարը:

Հետզհետէ բացուելու են հետեւեալ բաժինները. 1. Ազգազրական հրատարակութիւններ. 2. Արտասահմանեան պարբերական հրատարակութիւններ. 3. Վերածնութեան շրջանի հրատարակութիւններ (Էջմիածնի, Նոր-Ջուղայի, Հնդկաստանի) և այլն. և ընդհանրապէս ռուսահայ հրատարակութիւններ. 4. Միութարեանների (Վենետիկի և Վեննայի) հրատարակութիւններ. 5. Տաճկահայոց հրատարակութիւններ. 6. Ամերիկահայոց 7. Եգիպտահայոց 8. Պարսկահայոց հրատարակութիւններ:

Ընկերութիւնը ամեն ջանք գործ է դնում ձեռք բերելու հայերէն բոլոր հրատարակութիւնները, որպէսզի կարողանայ իւր թանգարան-գրադարանի շէնքը բանալ հայերէն հրատարակութիւնների ընդհանուր ամբողջական ցուցահանդէսով և այս մատենադարանը դարձնէ հայ գրերի և տպագրութեան համազգային մեծ տօնի մկայուն յուշարձան:

ԴԱՍԱԽՈՍՈՒԹԻՒՆՆԵՐ.

Ընկերութիւնը կազմակերպել է բազմաթիւ դասախօսութիւններ, որոնց մէջ յիշատակելի են.

Պրոֆ. Ն. Մարր. Անիում կատարած իւր պեղումների մասին.

Արշակ Չոբանեան. Սէրը հայ ժողովրդական երգերու մէջ:

Միքայէլ Յովնանիսեան. Կրօնների էվոլյուցիան:

Լէօ. 1) Հայոց գրականութեան զարգացումը XIX դարում:

2) Հայ մեղիքութիւններ: 3) Հայերի յարաբերութիւնները Ռուսական Կայսերական տան հետ:

Ատրպետ. Հայկական ճարտարապետութեան զարգացումը:

Մամբրէ Մատենճեան. 1) Հայ ժողովրդական բանահիւսութեան զարգացումը: 2) Արտիկան իբր ազգազրագէտ: 3) Ռուսահայոց մամուլը:

Դարեգին վոդ. Յովսէփեան. 1) Մանրանկարչութիւնը Հայոց մէջ: 2) Պոռեան շրջանի մանրանկարչութիւնը: 3) Հայկական հնագրութիւնը:

Ա. Սարուխան. Տաճկահայոց սահմանագրութեան ծագումն ու զարգացումը:

Կարապետ եպիսկոպոս. Հայոց գրականութիւնը իւր դասական զարգացման շրջանում:

Ա. Բալանթար. Ազգազրական նիւթեր՝ Գ. Սունդուկեանի երկերում:

Ե. Լալայեան. 1) Պեղումներ Նոր-Բայազետում: 2) Վասպուրականի հայոց ազգագրութիւնը: 3) Վասպուրականի ասորիները: 4) Հայոց ազգագրութեան էվոլյուցիան: 5) Հայ մեղիքութիւններ: 6) Պեղումներ Էջմիածնի գաւառում:

Ա. Շահնազարեան. Սրուանձտեանի երկերի ուսումնասիրութիւնը:

Իփսիկեան. Ամուսնութեան սովորոյթների զարգացումը հայերիս մէջ:

Բեդեկեան. Հնդկաստանի հայերը:

Մաքսուդեան Մ. վրդ. Հայոց նախնական քաղաքակրթութիւնը ըստ լեզուաբանութեան:

Իշխանեան Բ. Կովկասեան ժողովուրդների տերրիտորիական բաժանումները և պրոֆեսիօնալ-հասարակական կազմը:

Յովնանիսեան. Հ. Հայ պատմագիրների պատմա-փիլիսոփայական աշխարհայեացքը:

Խոստիկեան Մ. Յունական փիլիսոփայութիւնը Հին Հայաստանում:

Մուսայեան Հ. Համայնական հոգատիրութիւնը Անգրկովկասում:

ԳԻՏԱԿԱՆ ԱՐՇԱԽԱՆՔ

Ընկերութիւնը միշտ ձգտել է գիտական արշաւանքներ կազմակերպելու, սակայն նիւթական սուղ միջոցները թոյլ են տուել նրան նպաստելու Գարեգին վարդապետ Յովսէփեանին երուսաղէմ մեկնելու՝ Հայ ձեռագրների մանրանկարները ուսումնասիրելու. Ե. Լալայեանին էջմիածնի գաւառում պեղումներ կատարելու, Տարազրոսին՝ Վայոց Ձորի հայ եկեղեցիների յատակագծերը հանելու և այլն:

ՄԱՐԴԱՔԱՆԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՅՆԵՐ

Ազգագրական ընկերութիւնը ի նկատ առնելով, որ հայ մտաւորականներից շատ շատերը պէտք ունին ուսանելու հայոց լեզուն, պատմութիւնը, գրականութիւնը, Կովկասի աշխարհագրութիւնը, հնախօսութիւնը և այլն, մտադիր է հիմնել դասընթացներ, սակայն յարմարաւոր դահլիճ չունենալու պատճառով, սպասում է իւր սեպհական շէնքի կառուցման:

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՃԻԻՂԵՐԸ

Ընկերութիւնը ունի ճիւղեր Ադէքսանդրապոլում, Կարսում, Երևանում, Նոր-Բայազետում, Ախալքալակում: Սրանց պարտականութիւնն է մօտից հսկել տեղական հնութիւնների վրայ և հաւաքել ու հրատարակել իւրաքանչիւրը իւր շրջանի բանահիւսութիւնը, որի համար հիմնուած է «Պատուաշունչ» ընդհանուր խորագիրը կրող հրատարակութիւնը:

ԹԱՆԳԱՐԱՆ—ԳՐԱԴԱՐԱՆԻ ՇէՆՔ

Խորհուրդը այլևս չկարողանալով անսալ իւր թանգարան-գրադարանի համար սեպհական շէնք ունենալու անհրաժեշտութեան առջև՝ նախ ամբողջ կազմով Թիֆլիսում և ապա պատգամաւորութեամբ էջմիածնում գիմեց Նորին Վեհափառութիւն Գէորգ Ե. ամենայն հայոց Կաթողիկոսին, խնդրելով բարեհաճիլ թոյլ տալ կառուցանելու հայկական ճարտարապետութեամբ մի գեղեցիկ շէնք Թիֆլիսի Վանաց Մայր եկեղեցու արևմտեան կողմը գտնուած էջմիածնապատկան հողի վրայ: Նորին Վեհափառութիւնը 1913 թ. փետրուարի 4. № 248 սրբատառ կոնգակով յայտնում է, որ առանձին կոնգակով հրամայել է սինոդին «տնօրինել վարժան», և աւելացնում է. «Օրհնելով զօգտակար զոր-

ծունէութիւն և զգովելի եռանդ վարչութեանդ, օրհնեմք եւ քաջալերեմք զնախածոնողս, զվաստակաւորս եւ զհամայն կազմն ընկերութեանդ, մաղթելով ի Տեսոնէ կար եւ զօրութիւն վասն կատարեալ յաջողութեան ծոնարկեալ զործողդ»: Սինոդն էլ 1913 թ. մարտի 13-ին № 498 գրութեամբ որոշումն է կայացնում յանձնելու Ազգագրական ընկերութեան Թիֆլիսի աւագ եկեղեցու արևմտեան կողմը գտնուող էջմիածնապատկան հողը թանգարան-գրադարանի շէնք կառուցանելու, այն պայմանով, որ ընկերութիւնը ամեն տարի իբրև հողաբաժնի կապալագրամ վճարի 600 ռ. յօգուտ Մայր Աթոռի. և ընկերութեան փականան դէպքում համաձայն ընկ. կանոնադրութեան 62 յօդուածի, այս շէնքը ևս, ընկերութեան միւս շարժական և անշարժ կայքերի հետ միանալով էջմիածնին:

Խորհրդի նախագահ Ա. Մելիք-Աղաբեան, փոխ-նախագահուհի տ. Հայկանոյշ Մարտիրոսեան և անդամ Համբարձում Մելիքեան այս նպատակի համար նուիրաբերեցին ամեն մէկը հինգ հազարական ռուբլի: Նաև խորհրդի անդամ ճարտարապետ Քրիստափոր Տէր Սարգսեան և խմբագրական մասնաժողովի անդամ ճարտարապետ Ռուբէն Մարտիրոսեան յանձն առան ձրիաբար կազմելու շէնքի մակարդակը: Ենթադրւում է շինութեան վրայ ծախսել 90—100,000 ռուբլի:

Ուրուագծելով ընկերութեան նպատակներն ու գործունէութիւնը, մեզ մնում է ասել, որ ընկերութիւնը մինչև այժմ և այսուհետեւ էլ մնացել է և պիտի մնայ ամեն տեսակ կուսակցութիւններից հեռու, զուտ գիտական բարձրութեան վրայ և հրաւէր է կարգում այն բոլոր մարդկանց, որոնց համար թանգ է հայրենիքի և ազգի ուսումնասիրութիւնը, որոնք ըմբռնում են մի, նոյն իսկ փոքր երկրի ու ժողովրդի գիտական ուսումնասիրութեան մեծ կարևորութիւնը մարդաբանական ընդհանուր գիտութիւնների շարքում, որոնք հասարակական պարտականութեան գիտակցութիւն ունին պահպանելու հայրենիքի սրբազան հնութիւններն ու աւանդութիւնները, որոնք ըմբռնում են գիտութեան այն մեծ խօսքը, թէ նախ և առաջ «Ծանիր զբեզ», համախմբուիլ մեր այս ընկերութեան շուրջը, եւ ընդհանուր ուժերով առաջ տանել մեր հանուր հայրենիքի եւ ազգի ուսումնասիրութեան նուիրական գործը, պարտանաւաչութեամբ կատարել մեր ազգային սուրբ պարտականութիւնը եւ մեր լուծման մատուցանել մարդաբանական գիտութիւններին:

Խ Ո Ր Հ Ո Ւ Ր Դ

Նախագահ՝ Աղէքսանդր Մելիք Ազարեան
 Փոխ-նախագահ՝ Տ. Հայկանոյշ Մարտիրոսեան
 Գանձապահ՝ Յովակիմ Զաթալբաշեան
 Անդամներ՝ Տ. Վառվառէ Ալիխանեան, Տ. Նունէ Դո-
 լուխանեան, Յովսէփ Դորդանեան, Համբարձում Մելիքեան,
 Արտաշէս Շիւեան բժ., Գէորգ Մելիք-Կարապետեան,
 Արշակ Մելիք-Կարապետեան, Քրիստափոր Տէր-Սարգսեան:
 Անդամ քարտուղար՝ Երուանդ Լալայեան

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՄԱՍՆԱԺՈՂՈՎ

Նախագահ՝ Երուանդ Լալայեան
 Փոխ-նախագահ՝ Ասլան Շահնազարեան
 Անդամներ՝ Ատրպետ, Դերենիկ Դեմիրչեան, Մամբրէ
 Մատէնճեան, Ռուբէն Մարտիրոսեան, Խաչիկ Սամուէլեան,
 Սմբատ Տէր-Աւետիսեան: Քարտուղար՝ Գարեգին Լեոնեան:

ՎԵՐԱՍՏՈՒԳԻՉ ՄԱՍՆԱԺՈՂՈՎ

Անդամներ՝ Սարգիս Խարազեան, Զաքարիա Մամու-
 լեան, Կարապետ Շիրինեան

Ընկերութեան մշտական անդամակցութեան վճարն
 է առնուազը 50 կամ 100 ռ. ստանում է միանուագ Ըն-
 կերութեան բոլոր լոյս տեսած և յաջորդաբար լոյս տես-
 նելիք հրատարակութիւնները:

Տարեկան անդամակցական վճարն է՝ 6 ռուբլի,
 5 ռուբլու արժողութեան զիրք ստանալու պայմանով:

Ազգագրական Հանդիսի 1 - 25 զրքերը միասին ար-
 ժեն 37 ռ. 50 կ., մի զիրքը՝ 1 ռ. 50 կ.: Բաժանորդա-
 գիրն է 4 զրքինը՝ 5 ռուբլի, երկու զրքինը՝ 3 ռուբլի:

Ընկերութեան հասցէն.

Армянское Этнографическое О-во, Тифлисъ.
 Soci  t   Ethnographique Armenienne, Tiflis, Caucase.

Ազգագրական Հանդիսի հասցէն է.

Въ редакцію журнала Азгграканъ Андесъ, Тифлисъ.
 R  daction de la revue „Azgagrakan Handess“ Tiflis (Caucase)

Ընկերութեան գրասենեակը, խմբագրատունը և գրա-
 դարան-թանգարանը գտնւում են Լեւոնտովեան փողոցի
 № 1, էջմիածնապատկան տանը:



53. Յովհաննէսեան Կարապետ
54. Յովհաննիսեան Շուշանիկ
55. Նունուֆարեան Սարգիս
56. Շիրինեան Կարապետ
57. Շիւեան Սիմէօն
58. Զաթալբաշեան Յովակիմ.
59. Զիլինգարեան Գեորգ
60. † Պոռչեան Պերճ
61. Զաղէթեան Աղէքսանդր
62. Վարդազարեան Փիլիպպոս.
63. Վարդանեան Մարտիրոս
64. Սողոմոնեան Սրբուհի
65. Սամուէլեան Խաչատուր
66. † Սրբըշիկեան Վաղարշակ
67. Սերերբիկեան Յովհաննէս
68. Սերերբիկեան Նունէ
69. Ստեփանեան Յակովբ
70. Քալանթարեան Սուփիա
71. Քալանթարեան Յովհաննէս
72. Քալանթարեան Մկրտիչ
73. Քարիմեան Համբարձում
74. Տէր Մարգարեան Գապար
75. Տէր Յակովբեան Աւետիք
76. † Փրիլոնեան Գրիգոր

Բ. ԲԱԳԻՈՒՄ

77. Ազամեան Յովհաննէս
78. Ազամեան Հեղինէ
79. Ասլանեան Ոսկի
80. Ասլանեան Մամուէլ
81. Աւագեանց Մանուշար
82. Արամազդ րնիկ.
83. Բուզուգեան Արսէն
84. Գառպարեան Արշալիր
85. Թումանեան Արշակ
86. Թումանեան Եղիաբէթ
87. Թումանեան Մարգարիտ
88. Թումանեան Սուփիա
89. † Թումանեան Քրիստափոր
90. Խաչատրեան Գրիգոր

91. Խոջամիրեան Յակոբ
92. Ծատուրեան Յովհաննէս
93. Ծատուրեան Շամիլ
94. Ծատուրեան Պատուակա
95. Կոստանեան Գեղամ
96. Կրասիլնիկեան Հեղինէ
97. Ղազարեան Աւետիս
98. Շաղիտանեան Աւետիս
99. Շաղիտանեան Իզաբէլլա
100. Շաղիտանեան Մկրտիչ
101. Սարգսեան Եղիաբէթ
102. Սարգսեան Քրիստափոր
103. Սարումեան Ներսէս
104. Սերոբեան Բագրատ
105. Վաչեան Աստուածատուր
106. † Վաչեան Մարիամ
107. Տէր Բաղդասարեան Արէլ

Գ. ԱԳՈՒԼԻՍՈՒՄ

108. Հախնազարեան Սարգիս
109. Ներսիսեան Աւետիք
- Գ. ԱՂԷՔՍԱՆԴՐԱՊՈԼՈՒՄ
110. Կամսարական Կարապետ
111. Ղլաչեան Արսէն
112. Շաթիրեան Աղէքսանդր

Ե. ԱՂԷՔՍԱՆԴՐԻՍՈՒՄ

113. Մուրաֆեան Յովհաննէս
114. Սանգալեան Եղիաբէթ
- Ա.Ա.Լ.ՔԱԼԱՔՈՒՄ
115. Տէր Գրիգորեան Զալալ
116. Շիւոյեան Յովհաննէս

Զ. ԵՐԵՒԱՆՈՒՄ

117. Երեանի Մ.
- Ե. ԵԼ.
118. Շաւարժ

*) Նուէր Ա.



19825

Ը. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

119. Յովսէփեան Գ. վարդապետ

Թ. ԽԵՐՍՈՆՈՒՄ

120 Իշխ. Արղուիսեան Երկայ-
նարագուկ Պարէտ

Ժ. ԿԱՐՍՈՒՄ

121 Պապովեան Յովհաննէս

ԿԱՅԻՐԷՆՈՒՄ

122 Մէօթէմէտեան Արմենակ

ԺԱ. ՇՈՒՇՈՒՄ

123 Տէր Ղազարեան Իսահակ

ԺԲ. ՀԻՆ-ՆԱԽԻՋԵԻԱՆՈՒՄ

124 Զամփուլաղեան Միքայէլ

ԺԳ. ՄՈՍԿՈՒԱՅՈՒՄ

125 Ժամհարեան Նիկողայոս

126 † Շահաղիղեան Սմբատ

127 Պապովեան Եղոկիա

ԺԴ. ՊԵՏԵՐՔՈՒՐԳՈՒՄ

128 Պապաջանեան Թամարա

129 Պապաջանեան Միքայէլ

IV. 1913 Թուի տարեկան քա-
ժանորդ անդամներ (6 ք. ան-
դամով/նարով)

130 Ալֆերիեկ Սեր. Պետրովիչ.
Վանայ ուսնայ փ.-հիւղատ.

131 Արովեան Սեդրակ

132 Արբաշամեան Միքայէլ

133 Ալիբէկեան Նինա

134 Ալիեանեան Վառվառէ

135 Առաքիլեան Համբարձում

136 ԲԺ. Աղասարեան Բախշի

137 Ատրպետ

138 Աւթանդիլեան Հեղինէ

139 Բաղդասարեան Անահիտ

140 Բերբերեան Մինաս

141 Դեմիրճեան Դեբենիկ

142 Եփրեմ եպ. Սուքիասեան

143 Թորգոմ եպ. առաջնորդ
Սեբաստիոյ

144 Թումանեան Միքայէլ Իշխ.

145 Իշխանեան Բախշի

146 Լիսեան Գարեգին

147 Սոստիկեան Մինաս

148 Սուլաղեան Յովհաննէս

149 Կարապետ եպ. Տէր Մկրտա-
չեան

150 Կաֆեան Գաբրիէլ

151 Ղամբարեան Պողոս

152 Ղարաջեան Մարիամ

153 Ղորղանեան Յովսէփ

154 Մարգարեան Յովհաննէս քԺ.

155 Մատէնճեան Մամբրէ

156 Մուսայէլեան Հայրապետ

157 Մելեան Վառվառէ

158 Յակոբեան Ղեոնդ

159 Յովհաննիսեան Հայկ

160 Նաւասարդեան Բազրատ

161 Նարաթեան Մարտիրոս

162 Նարաթեան Շուշանիկ քԺ.

163 Շիսեան Սոֆիա

164 Շահնազարեան Արսէն

165 Շահմուրադեան Գալուստ քԺ.

166 Պալէքեան Բարսեղ

167 Սահակ քահ. Սահակեան

168 Ստամբուլցեան Սորէն

169 Տէր-Աւետիսեան Սմբատ

170 Տէր-Միքայելեան Յովհաննէս

171 Տէր-Յակոբեան Յակոբ

172 Տէր-Յակոբեան Սենեքերիմ

173 Տէր-Սարգսեան Քրիստափոր

174 Փիրումեան Տիգրան

ՀՀ Ազգային գրադարան



NL0239297